ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Ավետիք Պետրոսյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության ԵՏՄ մաքսային քաղաքականության և օրենսդրական կարգավորման բաժնի ավագ մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ղազախստանի Հանրապետություն, ք. Ալմաթի, 2024 թվականի դեկտեմբերի 2-ից դեկտեմբերի 13-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Մակրոտնտեսական վերլուծություն և կառավարում» դասընթացին, որի ընթացքում ներկայացվել են տնտեսության հատվածները, դրանց միջև փոխառնչությունները: Դասընթացը ուղղված էր նաև տարբեր մակրոտնտեսական քաղաքականությունների արդյունավետության գնահատմանը, դրանց գործիքների ուսումնասիրմանը և դրանց միջոցով մակրոտնտնտեսական կայունության ձեռքբերման ուղիների վերլուծությանը: Դասընթացը ուղեկցվել է կոնկրետ երկրի օրինակով վերլուծությունների և կանխատեսումների իրականացմամբ:

Ընդհանուր առմամբ, դասընթացը համապարփակ կերպով ամփոփել է մակրոտնտեսական կայունության գնահատման մեթոդական մոտեցումները և գործիքակազմը, որոնք հնարավորություն են տալիս առավել լավ պատկերացնել տնտեսական համակարգը, տնտեսության հատվածներն ու դրանց միջև փոխառնչությունները:

5. Քննարկված թեմաները՝

1. Մակրոտնտեսական կայունություն,
2. Քանակական վերլուծություն և կանխատեսման մեթոդներ,
3. Իրական հատված և կանխատեսումներ.
   - ՀՆԱ և Ինֆլյացիա,
   - Դեֆլյատոր և Փոխարժեք,
4. Վճարային հաշվեկշռի ընդհանուր բնութագիր և ծանոթություն.
   - Արտահանում, ներմուծում, կապիտալի հաշիվ,

դասընթացի ամփոփում, ներկայացվել է շնորհանդես՝ Ղազախստանի Հանրապետության տնտեսության ախտորոշում: Կիրառելով ներկայացված գործիքակազմը՝ բացահայտվել է տնտեսության արտաքին, ֆինանսական և հարկաբյուջետային հատվածներում առկա իրավիճակը, կուտակված ռիսկերը և ներկայացվել են քաղաքանությունների մշակման առաջարկներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ծանոթանալով տարբեր երկրներում իրականացվող մարկոտնտեսական վերլուծությունների առանձանահատկություններին՝ առաջարկում եմ քննարկել դրանց լավագույն միջազգային փորձերն ու արդի գործիքակազմերը՝ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հարկաբյուջետային վերլուծությունների իրականացման համատեքստում, քանի որ լավագույն փորձի դիտարկումն առաջնային կարևորություն ունի արդյունավետ քաղաքականություն մշակելու և իրականացնելու առումով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

18 դեկտեմբեր, 2024թ.

- Արտաքին պահուստները և ԱՄՀ-ի դերը,
- Խնայողությունների և ներդրումների մնացորդը,

5. Ֆիսկալ հատվածը և կանխատեսումները.
    - Հարկաբյուջետային հատվածի շրջանակը,
    - Ֆիսկալ հաշվառում,
    - Ֆինանսավորում և պարտք,
    - Կանխատեսման մեթոդներ,
6. Ֆիսկալ քաղաքականություն.
    - Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը տնտեսության վրա,
    - Մակրոտնտեսական ցնցումների ազդեցությունը հարկաբյուջետային դեֆիցիտի վրա,
    - Ինչպես վարել հարկաբյուջետային քաղաքականություն,
    - Ֆիսկալ բազմապատկիչների գնահատում,
7. Դրամավարկային քաղաքականություն և կանխատեսումներ.
    - Դրամական հաշիվներ,
    - Փոխառնչություններ այլ ոլորտների հետ,
    - Կանխատեսման և գնահատման մեթոդներ,
8. Մակրոտնտեսական և հարկաբյուջետային կայունություն.
    - Տնտեսության միջնաժամկետ դինամիկան,
    - Պետական և արտաքին պարտքի կայունությունը,
    - Պարզ միջնաժամկետ շրջանակի նախագծում,
9. Մակրոֆինանսական կայունություն.
    - Մակրոֆինանսական կապերի վերլուծություն և գնահատում,
    - Ֆինանսական խոցելի կողմերի բացահայտում,
    - Մակրոպրուդենցիալ քաղաքականության ուսումասիրություն,
    - Սթրես-թեստավորում,
10. Մակրոտնտեսական ճշգրտումների ծրագրում.
    - Ծրագրի ձևավորում. կայունացման քաղաքականություն և կառուցվածքային բարեփոխումներ,
    - Արտաքին ֆինանսավորման դերը,
    - Հարկաբյուջետային քաղաքականություն և մակրոտնտեսական կայունություն,
    - Կառուցվածքային բարեփոխումների առաջնահերթությունների սահմանում,

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացով նախատեսված դասախոսություններն ուղեկցվել են գործնական սեմինարներով՝ մշակված գործիքակազմով ներկայացված տեսական գիտելիքները գործնականում կիրառելու նպատակով: Յուրաքանչյուր գործնական աշխատանք ամփոփվում էր ստացված արդյունքների քննարկմամբ: Մասնավորապես, որպես